

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 74-ՐԴ ԵՎ 75-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 սեպտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի
(զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ Մ. Խաչատրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-
բանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ
Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով)
100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահ-
մանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արման Սահակյանի
դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և

75-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթն Արման Սահակյանի՝ 2017 թվականի մայիսի 10-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «**Դատավարական ժամկետների սահմանումը և հաշվարկը**» վերտառությամբ 74-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատավարական գործողությունները կատարվում են սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում: Դրանց բացակայության դեպքում դատավարական գործողությունների կատարման ժամկետները սահմանում է դատարանը:

2. Դատավարական գործողություններ կատարելու համար ժամկետները որոշվում են օրացուցային ստույգ տարով, ամսով, ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածով, որի ընթացքում գործողությունը կարող է կատարվել:

3. Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվվող դատավարական ժամկետի ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա սկիզբը»:

Օրենսգրքի՝ «**Դատավարական ժամկետների ավարտը**» վերտառությամբ 75-րդ հոդվածը սահմանում է.

«1. Տարիներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին: Ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Եթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջը համընկնում է այնպիսի ամսվա, որը համապատասխան ամսաթիվ չունի, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

2. Դատավարական գործողությունը կարող է կատարվել մինչև սահմանված ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը»:

Ընդունումից ի վեր օրենսգրքի վերոհիշյալ հոդվածները փոփոխության չեն ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

19.06.2014 թվականին Արման Սահակյանի, Գրիգոր Գևորգյանի և Հովհաննես Մկրտչյանի հայցի հիման վրա հարուցվել է թիվ ԵԿԴ/2146/02/14 քաղաքացիական գործն ընդդեմ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի և Հովհաննես Գալաջյանի:

14.05.2015 թվականին ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մասնակի բավարարել է հայցը, և դատարանի վճիռը վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման արդյունքում մնացել է անփոփոխ:

30.03.2016 թվականին Հայկ Բաբուխանյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք այն հիմնավորմամբ, որ ինքը, որպես գործին մասնակից անձ, չի ծանուցվել 29.04.2015թ. դատական նիստի մասին և այդ մասին տեղեկացել է «Datalex.am» կայքից: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 26.05.2016 թվականին բավարարել է վերաքննիչ բողոքը և գործն ուղարկել նոր քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը հայցվորների ներկայացուցչի կողմից բողոքարկվել է Վճռաբեկ դատարան, որն իր` 20.07.2016

թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ սահմանելով եռօրյա ժամկետ վճռաբեկ բողոքի ձևական սխալը շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճենն Ա. Սահակյանի, Գ. Գևորգյանի և Հ. Մկրտչյանի ներկայացուցիչ Մարո Խաչատուրյանն ստացել է 19.09.2016 թվականին և 23.09.2016 թվականին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ «Դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին» կից միջնորդությամբ:

«Դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին» միջնորդությամբ Մարո Խաչատուրյանը բերել է հիմնավորումներ այն մասին, որ Վճռաբեկ դատարանի 20.07.2016 թվականի որոշման պատճենն ստացել է 19.09.2016 թվականին, և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու ժամկետի բացթողումը պայմանավորված է դատարանի վրիպակով, այն է՝ դատարանը որոշումն ուղարկել է այլ հասցեով, որը գործով որպես պատասխանող ներգրավված Հայկ Բարուխանյանի ծանուցման հասցեն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը 12.10.2016 թվականին կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ հետևյալ հիմնավորմամբ. «Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի միջնորդությունը՝ վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, ինչպես նաև վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, գտնում է, որ միջնորդությունը ենթակա է մերժման, իսկ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության... »:

Դատարանն այս որոշումը պատճառաբանել է այն հանգամանքով, որ դիմողները, վերադարձված վճռաբեկ բողոքն ստանալով 19.09.2016 թվականին, այդուհանդերձ, բողոքը կրկին Վճռաբեկ դատարան են ներկայացրել 23.09.2016 թվականին և չեն ներկայացրել որևէ հիմնավորում սեպտեմբերի 22-23-ն ընկած ժամանակահատվածը բաց թողնելու վերաբերյալ:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 61, 63 և 79-րդ հոդվածներին:

Դիմողը նշում է, որ վիճարկվող նորմերում ամրագրված են դատավարական ժամկետների որոշման չափորոշիչները, համաձայն որոնց՝ վերջիններս որոշվում են օրացուցային ստույգ տարով, ամսով, ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածով: Ընդ որում, բոլոր ժամկետներին տրված է ընդհանուր մոտեցում՝ դրանց սկսման և ավարտման մասով: Բացի դրանից, օրենսդիրն առանձնացրել է «աշխատանքային օր» եզրույթը, ինչը բացառում է ոչ աշխատանքային օրերին որևէ դատավարական գործողություն կատարելը:

Ըստ դիմողի՝ օրերով հաշվարկվող ժամկետների դեպքում խնդիրներ են առաջանում սուբյեկտների համար, քանի որ դրանց հոսքի մեջ ժամանակագրային առումով կարող են ընդգրկվել ոչ աշխատանքային օրեր, որոնք անհնարին են դարձնում համապատասխան վարքագծի դրսևորումը: Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի ամրագրում «օրացուցային օր» եզրույթը, սակայն, փաստորեն, ժամկետները հաշվարկվում են այդ եզրույթի համատեքստում՝ իրավունքի հասցեատիրոջ համար առաջացնելով շփոթմունք և վարքագծի դրսևորման ոչ հստակություն:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածները որոշակի չեն այնքանով, որքանով չեն ամրագրում օրերով հաշվարկվող ժամկետների հաշվարկի ընթացքը, չեն ընդգծում դրա հաշվարկը «օրացուցային օր» եզրույթին համապատասխան կատարելը, կանխատեսելի չեն սուբյեկտի համար և չեն ապահովում իրավունքի սուբյեկտի և իրավակիրառողի միատեսակ ընկալումը:

Դիմողն իր դիրքորոշումները հիմնավորելու համար վկայակոչում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումները, մասնավորապես արտահայտված ՍԴՈ-719, ՍԴՈ-1052 որոշումներում:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ «Վճռաբեկ վարույթի առաջացումը կախված է մի կողմից՝ անձի մոտ վճռաբեկ բողոքարկման իրավունքի առկայությունից, մյուս կողմից՝ այդ իրավունքի իրացման դատավարական օրենքով սահմանված կարգից: Բողոքարկման

իրավունքի իրացման պայմաններից մեկը հենց բողոքը սահմանված ժամկետում ներկայացնելն է: Այս պայմանի բացակայությունը խոչընդոտում է վճռաբեկ վարույթի հարուցմանը, սակայն չի բացառում այն, քանի որ այն կարող է շտկվել համապատասխան հիմքերի առկայության դեպքում բողոքարկման համար սահմանված ժամկետի բաց թողնելը հարգելի ճանաչելու վերաբերյալ դատարան միջնորդության ներկայացմամբ, ինչը սույն գործով ոչ աշխատանքային օրը բաց թողնելու հետ կապված չի արվել»:

Պատասխանողի կարծիքով՝ ակնհայտ է, որ սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթների իրավակարգավորումների պայմաններում օրերով հաշվարկվող ժամանակահատվածի դեպքում ոչ աշխատանքային օրերը չներառելու վերաբերյալ բացառություն սահմանված չլինելու դեպքում գործում է ընդհանուր կանոնը, այն է՝ «ոչ աշխատանքային օրերը ներառվում են սահմանված ժամանակահատվածում, բացառությամբ այն դեպքի, երբ այդ ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա»: Այս առումով քննարկվող ձևակերպումներն օրենսգրքի վիճարկվող դրույթներում բավականաչափ հստակ են, և այս մասով խնդրո առարկա դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, համապատասխան սուբյեկտների կողմից օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջներին:

Դիմողի դիտարկումն առ այն, որ տարով և ամսով որոշվող ժամկետի դեպքում ըստ էության խնդիր չի առաջանում, քանի որ հստակեցված են ժամկետի սկիզբը և ավարտը, որի դեպքում ժամկետի հոսքն անընդմեջ է, իսկ օրերով որոշվող ժամանակահատվածի դեպքում խնդիրներ են առաջանում ոչ աշխատանքային օրերի ներառման հարցում, ըստ պատասխանողի՝ քննադատության չի դիմանում, քանզի ըստ էության կարևոր չէ, թե որևէ դատավարական գործողության կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածն ի՞նչ չափման միավորով է սահմանվում՝ ժամերով, օրերով, շաբաթներով, ամիսներով, թե՞ տարիներով, եթե հստակ սահմանված են տվյալ ժամանակահատվածի հոսքի

սկիզբը և ավարտը, և բոլոր դեպքերում ժամկետի հոսքն անընդմեջ է, եթե օրենքը պատճառաբանված հիմքերի առկայության դեպքում հատուկ բացառություն չի սահմանում: Կոնկրետ դեպքում օրենքով հստակեցված են ինչպես տարով և ամիսներով, այնպես էլ օրերով հաշվարկվող ժամկետի սկիզբը և ավարտը:

Ըստ պատասխանողի՝ հիմնագուրկ է դիմողի պնդումն առ այն, որ դատավարական գործողությունների համար օրենքով սահմանված ամենակարճ ժամկետն օրենսգրքում եռօրյա ժամկետն է, հետևաբար՝ ՀՀ վճռաբեկ դատարանը չի կարող սահմանել ավելի կարճ ժամկետ: Օրենքով որոշված կոնկրետ ժամկետների սահմանման համար օրենսդիրը նկատի է ունենում համապատասխան դատավարական գործողության համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածը: Դատարանները նույնպես որոշակի ժամկետ սահմանելու դեպքում պարտավոր են հաշվի առնել տվյալ դատավարական գործողության համար սովորական հանգամանքների պայմաններում բավարար ժամանակահատվածը: Օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դատարանը լիազորված է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ մինչև մեկամսյա ժամկետ սահմանել ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար: Այս ժամկետը սահմանելիս վճռաբեկ դատարանը կարող է նաև, ի թիվս այլնի, հաշվի առնել սահմանվող ժամանակահատվածում ոչ աշխատանքային օրերի առկայությունը և ժամկետը սահմանել այդ հանգամանքի հաշվառմամբ:

Պատասխանողի կարծիքով՝ ոչ աշխատանքային օրերն օրերով հաշվարկվող ժամանակահատվածում ներառելու դեպքում անձի՝ դատարան դիմելու, արդարադատության մատչելիության, արդար դատաքննության իրավունքները վնասելու որևէ գործնական ռիսկ առկա չէ, հետևաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածներով սահմանված դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմողն ըստ էության վիճարկում է նորմի կիրառման իրավաչափությունը, պատասխանողը միջնորդում է կարճել գործի վարույթը:

5. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նախևառաջ արձանագրել, որ դիմողն իր իրավունքների ենթադրյալ խախտումն ըստ էության պայմանավորում է վիճարկվող դրույթներում իրավական անորոշության և օրենսդրական բացի առկայությամբ: Մասնավորապես, դիմողը վկայակոչում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համանման կանոնակարգումները, որտեղ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, տարանջատված են «օր» և «օրացուցային օր» եզրույթները, և որտեղ նախատեսված է, որ օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը, իսկ օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետներում ներառվում են հանգստյան և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը: Բացի դրանից, ըստ դիմողի՝ պարզ չէ, թե քաղաքացիական դատավարության շրջանակներում «օր» եզրույթը ներառում է, արդյոք, ոչ աշխատանքային օրը, թե՛ ոչ:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալին.

- արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված օրերով հաշվարկվող ժամկետի որոշման կարգը համահունչ է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքին, և արդյո՞ք առաջանում է այնպիսի անորոշություն, որը թույլ չի տալիս անձին դրսևորելու համապատասխան վարքագիծ, և ինչի արդյունքում խախտվում են անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Սահմանադրական կոնկրետ վերահսկողության շրջանակներում դիմողն ըստ էության վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածներով նախատեսված՝ օրերով հաշվարկվող ժամկետների հաշվարկման կարգի սահմանադրականությունը: ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել վերոհիշյալ հոդվածների համապատասխան դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանն այդ համատեքստում:

6. Սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածն ամրագրում է ժամկետների հաշվարկի կարգը՝ նախատեսելով երկու իրավիճակ. առաջին՝ երբ դատավարական ժամկետը հաշվարկվում է ստույգ **օրացուցային** տարով, ամսով և ամսաթվով, երկրորդ՝ որոշակի ժամանակահատվածով: Ընդ որում, օրենսդիրը հիշյալ օրենսգրքով չի մանրամասնել «որոշակի ժամանակահատված» եզրույթի բովանդակությունը, սակայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով ամրագրել է, որ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է **օրացուցային** տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

Վերոգրյալ երկու իրավական ակտերի համադրված վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշակի ժամանակահատվածով որոշվող ժամկետը, ի թիվս այլնի, կարող է հաշվարկվել **օրերով, որոնցում ներառվում են ոչ աշխատանքային օրերը**: Նման դիրքորոշման համար հիմք է հանդիսանում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը, որն ամրագրում է՝ այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Այսինքն՝ «օր» եզրույթն **ընդգրկում է նաև ոչ աշխատանքային օրը**:

Բացի դրանից, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածով նախատեսվում է, որ եթե օրենքով կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով սահմանված է ժամկետների հաշվարկման այլ կարգ, ապա տվյալ ակտով կարգավորվող իրավահարաբերությունների ժամանակ կիրառվում է այդ օրենքով կամ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով սահմանված ժամկետների հաշվարկման կարգը: Այսինքն՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածը թույլ է

տալիս, պայմանավորված կոնկրետ իրավահարաբերության առանձնահատկություններով, կոնկրետ օրենսդրական ակտով նախատեսել ժամկետների, այդ թվում՝ դատավարական, հաշվարկման այլ կարգ:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում դատավարական ժամկետների հաշվարկման հատուկ կարգ, ինչպես դա արվել է, օրինակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը, իսկ օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետներում ներառվում են հանգստյան և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասին, համաձայն որի՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով»: Այսինքն, «օրեր» հասկացությունը հաշվարկման տեսանկյունից չի կարող տարբեր բովանդակություն ներառել, եթե կիրառվում է **միևնույն իրավական ակտում**:

Այդ առումով, ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերում «օրեր» եզրույթը հաշվարկման տեսանկյունից կարող է ունենալ տարբեր բովանդակություն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առկա չեն իրավական անորոշություն և օրենքի բաց, քանի որ, նախ՝ քաղաքացիական դատավարության շրջանակներում օրենսդիրն ուղղակիորեն նախատեսել է, որ օրերով հաշվարկվող ժամկետներում ներառվում են նաև ոչ աշխատանքային օրերը, երկրորդ՝ քաղաքացիական դատավարության շրջանակներում օրենսդիրն անհրաժեշտ չի համարել ՀՀ վարչական դատա-

վարության օրենսգրքի նմանությամբ նախատեսել որևէ հատուկ կանոնակարգում դատավարական ժամկետներում ոչ աշխատանքային օրերը չընդգրկելու վերաբերյալ: Այսինքն, ըստ օրենսդրի՝ քաղաքացիական դատավարության շրջանակներում դատավարական ժամկետի ընթացքը հոսում է անընդհատ՝ ներառելով ցանկացած օր՝ աշխատանքային, թե ոչ աշխատանքային:

7. Անդրադառնալով քաղաքացիական դատավարության շրջանակներում հաշվարկվող դատավարական ժամկետների մեջ ոչ աշխատանքային օրերը ներառելու և դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքների համադրության հարցին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական դատավարության շրջանակներում դատավարական ժամկետների մեջ ոչ աշխատանքային օրերը ներառելը չի խոչընդոտում դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման հնարավորությանը, քանի որ առկա են օրենսդրական երաշխիքներ: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար: Այսինքն՝ օրենսդրորեն անձին տրամադրվում է որոշակի ժամանակահատված թույլ տրված սխալներն ուղղելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Օրենսդրական մյուս երաշխիքի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածը նաև ամրագրում է, որ այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Սա ևս մեկ երաշխիք է դատավարական ժամկետների հաշվարկի արդյունավետ իրացման և անձի կողմից իր պարտականությունների իրացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանա-

դրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

12 սեպտեմբերի 2017 թվականի
ՍԴՈ-1376